ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N# 12.01/16

Ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքների փոխանցման

ք. Երևան «12» հունվարի, 2016 թ.

«Զանգակ-97» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը՝ ի դեմս գլխավոր տնօրեն Սոկրատ Մկրտչյանի (անձնագիր՝ AM 0333633, տրված 10. 06. 2011թ., 005-ի կողմից), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Ձեռքբերող) մի կողմից, և հեղինակ Հովհաննես Զաքարյանը (անձնագիր՝ AA0236725, տրված 13.07.1995թ., 004-ի կողմից) (այսուհետ՝ Հեղինակ) մյուս կողմից (Ձեռքբերողը և Հեղինակը միասին այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Հեղինակը սույն պայմանագրով փոխանցում է Ձեռքբերողին «Արևմտահայերենի քերականություն 3», «Հայոց լեզու 6», «Հայ գրականություն 6» Սփյուռքի մեկօրյա դպրոցների համար նախատեսված էլեկտրոնային դասագրքի (PDF) մաս կազմող նյութերի (այսուհետ՝ Ստեղծագործություն) նկատմամբ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված՝ իր՝ որպես հեղինակի բացառիկ գույքային իրավունքները (այսուհետ՝ Գույքային իրավունքներ):

1.2. Ձեռքբերողը՝ սույն պայմանագրով սահմանված կարգով՝

1.2.1. ընդունում է իրեն փոխանցվող Գույքային իրավունքները.

1.2.2. վճարում է իրեն փոխանցված գույքային իրավունքների դիմաց:

2. Պայմանագրի ընդհանուր դրույթները

2.1. Հեղինակը երաշխավորում է, որ մինչ սույն պայմանագիրը կնքելու պահը Ստեղծագործության նկատմամբ ձեռք է բերել Օրենքով նախատեսված բացառիկ գույքային իրավունքներ, և որ Ստեղծագործության բովանդակությունը կազմող նյութերը չեն ոտնահարում երրորդ անձանց գույքային կամ այլ իրավունքները:

2.2. Կողմերը հայտարարում են, որ մինչ սույն պայմանագրի ստորագրումը Կողմերի միջև բոլոր իրավահարաբերությունների շրջանակներում բոլոր պարտավորությունները պատշաճ կատարված են, ուստի.

2.2.1. Հեղինակը հայտարարում է, որ մինչ սույն պայմանագրի ստորագրումը Ձեռքբերողի հետ ունեցած որևէ իրավահարաբերության առնչությամբ Ձեռքբերողի նկատմամբ որևէ պարտք և/կամ պահանջ չունի:

2.2.2. Ձեռքբերողը հայտարարում է, որ մինչ սույն պայմանագրի ստորագրումը Հեղինակի հետ ունեցած որևէ իրավահարաբերության առնչությամբ Հեղինակի նկատմամբ որևէ պարտք և/կամ պահանջ չունի:

2.3. Բացառիկ գույքային իրավունքները տրամադրվում են Ձեռքբերողին 1 (մեկ) տարի ժամկետով, սակայն դադարում են գործել գույքային իրավունքների գործողության՝ Օրենքով նախատեսված առավելագույն ժամկետը լրանալուց, և (կամ) Ստեղծագործությունը օրենսդրությամբ սահմանված կարգով հանրային սեփականություն դառնալուց հետո:

2.4. Սույն պայմանագրի 1.1 կետով փոխանցված իրավունքների գործողության տարածքը

ներառում է աշխարհի բոլոր պետությունները:

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1. Սույն պայմանագրի գինը յուրաքանչյուր գրքի համար կազմում է 444444 (չորս հարյուր քառասունչորս հազար 444) << դրամ (ներառյալ << օրենսդրությամբ սահմանված բոլոր հարկերը):

3.2. Ձեռքբերողը պարտավորվում է սույն պայմանագրի 3.1 կետով սահմանված վճարը վճարել մինչև 2016թ. դեկտեմբերի 30-ը:

3.3. Սույն պայմանագրի շրջանակներում բոլոր վճարումներն իրականացվում են կանխիկ Ձեռքբերողի դրամարկղից կամ փոխանցումով:

4. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

4.1. Ձեռքբերողն իրավունք ունի.

4.1.1.Սույն պայմանագրի 1.1 կետով իրեն փոխանցված իրավունքները սույն պայմանագրի գործողության ընթացքում տնօրինել, տիրապետել, օգտագործել, ինչպես նաև իր հայեցողությամբ և իր նախընտրած պայմաններով, Օրենքով սահմանված կարգով փոխանցել երրորդ անձի:

4.1.2. Իր հայեցողությամբ և իր նախընտրած պայմաններով վերարտադրել Ստեղծագործությունը:

4.1.3. Իր հայեցողությամբ և իր նախընտրած պայմաններով տարածել Ստեղծագործությունը:

4.1.4. Իր հայեցողությամբ և իր նախընտրած պայմաններով Ստեղծագործության բնօրինակը կամ օրինակները տալ վարձույթով:

4.1.5. Իր հայեցողությամբ և իր նախընտրած պայմաններով Ստեղծագործության բնօրինակի կամ օրինակների փոխատվության:

4.1.6. Իր հայեցողությամբ և իր նախընտրած պայմաններով թարգմանել, վերամշակել, վերադաշնակել, նկարազարդել, հարմարեցնել և այլ ձևերով վերափոխել Ստեղծագործությունը:

4.1.7. Իր հայեցողությամբ և իր նախընտրած պայմաններով թույլատրել Ստեղծագործության հաղորդումը հանրությանը:

4.1.8. Իր հայեցողությամբ և իր նախընտրած պայմաններով օգտագործել Ստեղծագործությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ ձևերով ու եղանակներով:

4.2. Ձեռքբերողը պարտավորվում է.

4.2.1. Հարգել Ստեղծագործության նկատմամբ Հեղինակի հեղինակության իրավունքը, զերծ պահել Ստեղծագործությունն աղավաղումներից և Հեղինակի համբավին կամ արժանապատվությանը վնաս հասցնող այլ ոտնձգություններից:

4.2.2.Հարգել Հեղինակի հետկանչի իրավունքը և հետկանչի պատճառով Ձեռքբերողի կրած բոլոր վնասները, ներառյալ բացթողված օգուտը Հեղինակի կողմից փոխհատուցելու դեպքում Ստեղծագործության օրինակները հանել շրջանառությունից:

4.3. Հեղինակը իրավունք ունի.

4.3.1. Հրապարակայնորեն ներկայանալ որպես Ստեղծագործության հեղինակ:

4.3.2. Լուսաբանման նպատակով Ստեղծագործությունն ընդգրկել իր հեղինակած այլ Ստեղծագործությունների ժողովածուներում:

4.4. Հեղինակը պարտավորվում է.

4.4.1. Ոչ մի դեպքում չօգտագործել Ստեղծագործությունն ամբողջությամբ կամ

Ստեղծագործության էական նշանակություն ունեցող որևէ հատված Ձեռքբերողի շահերին չհամապատասխանող կարգով:

4.4.2. Ստեղծագործության հետկանչի՝ իր՝ Օրենքով սահմանված իրավունքից օգտվելու դեպքում փոխհատուցել Ձեռքբերողի բոլոր վնասները, ներառյալ բացթողված օգուտը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Կողմերն իրականացնում են Ստեղծագործության հեղինակային իրավունքների պաշտպանությունը ՀՀ միջազգային պայմանագրերի և օրենսդրության համապատասխան:

5.2. Կողմերը պարտավորվում են անհապաղ հայտնել միմյանց և հեղինակային իրավունքի պաշտպանությունն իրականացնող պետական մարմիններին Ստեղծագործության անօրինական օգտագործման՝ իրենց հայտնի դարձած դեպքերի մասին:

6. Եզրափակիչ դրույթներ

Սույն պայմանագիրն իրավական ուժ է ստանում Կողմերի կողմից ստորագրման պահից:

Սույն պայմանագիրը բաղկացած է 3 էջից և կազմված է 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Պայմանագրի մեկական օրինակ պահվում է Կողմերի:

Սույն պայմանագրի փոփոխությունները և լրացումները վավեր են, եթե կազմված են մեկ միասնական փաստաթղթի տեսքով, ստորագրված են Կողմերի կամ նրանց ներկայացուցիչների կողմից և հաստատված են Կողմերի կնիքներով:

Սույն պայմանագրի փոփոխություններն ու լրացումները, սույն պայմանագրի շրջանակներում Կողմերի միջև կնքված լրացուցիչ համաձայնագրերը կցվում են սույն պայմանագրին և հանդիսանում են նրա բաղկացուցիչ մասը:

Սույն պայմանագրի շուրջ ծագած վեճերը լուծվում են Կողմերի անմիջական բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Բոլոր այն հարցերը, որոնք չեն կարգավորվում սույն պայմանագրով, ենթակա են կարգավորման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ձեռքբերող	Հեղինակ
«Զանգակ-97» ՍՊԸ	Հովհաննես Զաքարյանը
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի 49/2	(անձնագիր՝ AA0236725, տրված 13.07.1995թ.,
Հեռ. (37410) 232528	004-ի կողմից)
Ֆաքս (37410) 232595	
ՀԿՀՀ 00830786	
HSBC Account number: 001-040013-001	
Ս. Մկրտչյան	
Տնօրեն	